



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ Ռ.Վարդազարյանի 07.02.2014թ. գրավոր հաղորդումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռ.Վարդազարյանը (այսուհետ՝ **Դատարան**) 07.02.2014թ. դիմելով ՀՀ փաստաբանների պալատին (այսուհետ՝ **Պալատ**) տեղեկացրել է, որ 2014թ. հունվարի 21-ին դատարան է մուտքագրվել Էդուարդ, Աննա, Կարինե Սահակյանների լիազորված անձ՝ Գևորգ Սամվելի Հարությունյանի հայցադիմումը:

Հայցադիմումի չորրորդ էջում օգտագործվել է սեռական բնույթի հայիոյանք, իսկ հայցադիմումը ստորագրված է «Գ.Հարությունյանի» կողմից:

Նմանատիպ տեղեկություն էր հրապարակվել www.lurer.com լրատվական կայքում, սակայն կայքում տեղադրված հայցադիմումի միայն չորրորդ էջից հնարավոր չէր պարզել հայցադիմումը ստորագրած անձին:

Գտնում եմ, որ փաստաբան Գևորգ Սամվելի Հարությունյանի (արտոնագիր N1457) նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ, հեղկայա պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **փաստաբանը ենթակա**

07 փետրվար 2014թ.
թիվ 40-Ա /ԿԳ-14012
ք.Երևան

է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Կանոնագիրք**) համաձայն՝

2.2.1 Վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են գործել միայն այն դեպքում, եթե փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ չեն առնվում: Փաստաբանի համար այս ավանդական արժեքները մասնագիտական պարտավորություններ են:

2.2.2 Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

2.2.3 Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

4.1. Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Դատարանի գրությանը կից ներկայացված հայցադիմումը փաստաբան Գևորգ Հարությունյանի կողմից ստորագրված լինելու փաստը հաստատվելու դեպքում վերջինիս վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 2.2.1, 2.2.2, 2.2.3 և 4.1 կետերի պահանջներին:

Կարգապահական վարույթը հարուցվում է Կանոնագրքի 2.2.1, 2.2.2, 2.2.3 և 4.1 կետերի խախտման հատկանիշներով, փաստաբանի կողմից հայցադիմումում սեռական բնույթի հայհոյանք օգտագործելու փաստը ստուգելու շրջանակում:

Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39³ հոդվածի 1-ին մասով, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 10-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Գևորգ Սամվելի Հարությունյանի (արտոնագիր N1457) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.2.1, 2.2.2, 2.2.3 և 4.1 կետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14012):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Դատարանին:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Գևորգ Հարությունյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39² հոդվածով նախատեսված իրավունքները:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**07 փետրվար 2014թ.
թիվ 40-Ա /ԿԳ-14012
ք.Երևան**